

սական հարաբերությունները: Ցանկացած դարձվածային միավոր, որը հարում է որևէ խոսքի մասի, բնորոշվում է այդ խոսքի մասին հատկանշական քերականական կարգերով և առանձնահատկություններով: Անվանական դարձվածքների կազմությանը մասնակցում են գոյականը, ածականը, թվականը, դերանունը, որոշ դերբայներ, ինչպես նաև կապեր՝ տարբեր դրսևորումներով արտահայտելով զանազան հարաբերություններ, իսկ բայական դարձվածքների ձևաբանական կառուցվածքը պայմանավորվում է բայ խոսքի մասի բնույթով ու էությամբ [1]:

Ածականական դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Ածականական դարձվածքները վերահմաստավորված կերպով բնութագրում են որևէ անձ կամ առարկա, և ածական գերադաս անդամի առկայությունը նրանում պարտադիր չէ: Ածականը միշտ դրվում է դրական աստիճանով, իսկ համեմատության աստիճաններն օգտագործվում են, երբ համեմատություն է կատարվում տարբեր անձանց և առարկաների միջև: Եթե ածականական դարձվածքը կազմված է երկու գոյականներից, ապա նրանցից մեկը դրվում է թեք հոլովով՝ հաճախ սեռականով (*կրակի գին, հողի գին, ջրի գին, կրակի կտոր, արեգակի կտոր, աշխարհի աչք*): Հանդիպում են երկու գոյականներով ձևավորված դարձվածքներ, որտեղ երկու գոյականներն էլ դրվում են ուղղական-հայցականով՝ *ամպրոպ գլուխ, քար սիրտ*: Համադասական ածականական դարձվածային միավոր է *թանկ ու կրակ* կապակցությունը: Թվականով ու գոյականով է կաղապարված *մի հողի՝ մի ջրի* դարձվածքը:

Երբ ածականական դարձվածքը հանդես է գալիս ածական+գոյական կառուցվածքով, գերադաս անդամը գոյականն է, որը դրվում է եզակի ուղղականով, կարևոր է նաև շարադասությունը՝ *մարմանդ ջուր*: Եթե կառույցը գոյական+ածական տիպի է, նախադաս գոյականը գործածվում է ուղիղ ձևով և անպայման որոշիչ հոդով՝ *ջուրը փափուկ*, գոյականը կարող է դրվել նաև հոգնակի թվով՝ *ոտներն ամպոտ*: Մեծաքանակ են հարակատար և ենթակայական դերբայներով կազմված ածականական դարձվածային միավորները՝ *երկիր տեսած, աշխարհ տեսած, աշխարհ ման եկած, ջուրը տարած, գեղնին կպած, արևից ընկած, ամպերից իջած, կարկուտի տակ ընկած, խելքը քամուն տված, ջուրն ընկած մուկ, ջուր վերցնող խմոր, այն աշխարհից եկած, այն աշխարհ գնացած, երեսը բրդի ջրով լվացած, հիվանդի համար ջուր բերող, կարմիր արևից ընկած* [2] և այլն:

Ռուսերենում ածականի արժեքով կիրառվող դարձվածային միավորները բնութագրում են որևէ մեկին, ներկայացնում են անձի կամ առարկայի որակական հատկանիշը՝ *тыча тучей, не от мира сего, водой не разольешь, звезд с*

неба не хватает, подбитый ветром. Որոշ ածականական դարձվածքների հատուկ է սեռի քերականական կարգը, այն համաձայնեցվում է այն բառերի սեռերին, որոնց հետ համադրվում է տվյալ դարձվածային միավորը, ուստի կարող են հանդես գալ բոլոր երեք սեռերով: Ռուսերենի ածականական դարձվածքները կարող են կիրառվել և՛ եզակիով, և՛ հոգնակիով, իսկ որոշ դարձվածքներ գործածական են կամ եզակիով, կամ հոգնակիով՝ *водой не разольешь, звезд с неба не хватает.* Համեմատության արժեքով են կիրառվում *как снег на голову, как в воду опущенный, как две капли воды, как сквозь землю, как с гуся вода* [3] դարձվածային միավորները, որոնց շարադասությունը կայուն է, կապը միշտ նախադաս է, սեռի և թվի քերականական կարգ ունեն միայն այն դարձվածքները, որոնց վերջին բաղադրիչը ածական է (*как в воду опущенный*) [4]:

Անգլերենում հանդիպող ածականական դարձվածային միավորները սակավաթիվ են, բայց պատկերավոր բնութագրություններ են ներկայացնում՝ *full of bush fire, dead in the world, blind to the world, wind in the head, milk and water.* Ավելի հաճախ հանդիպում են համեմատություն-դարձվածքներ, որոնցում հատկանիշները համադրվում են միմյանց հետ: Համեմատությունները կարող են լինել դրական, բացասական կամ ուղղակի բնորոշել որևէ անձ, առարկա և երևույթ, իսկ ածականը այս դարձվածքներում դրվում է դրական աստիճանով՝ *as right as rain, as white as snow, as free as the air, as light as air, as black as thunder, as loud as thunder, as weak as water, as free as the wind, as dull as ditchwater, as thick as hail, as quick as lightning, as blue as sky, as red as fire, as hot as fire, as changeable as the moon, as silent as the stars, swift as the wind* [5]: Առաջին կապը համարվում է կամընտրական, և դարձվածքը կարող է գործածվել կապով և առանց կապի, իսկ երկրորդ *as* կապը անփոփոխ է: Որոշ ածականական համեմատություն դարձվածքներ հարաբերակից են բարդ բառերի՝ *as blue as sky - sky-blue, as white as snow - snow-white*, որոնք կիրառվում են առանց *as* կապի [6]: Որոշ ածականներ, բացի դրական աստիճանից, կարող են կիրառվել նաև բաղադասական աստիճանով՝ *louder than thunder, quicker than lightning.*

Ածականական դարձվածային միավորները, որոնք ունեն բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչ, հայերենում, ռուսերենում և անգլերենում նախադասության մեջ կատարում են ածականին բնորոշ շարահյուսական պաշտոններ՝ ավելի հաճախ լինում են որոշիչ:

Կարմիր արևից ընկած Սարո ջան: (որոշիչ)

Հայրը *աշխարհ ման եկած*, Լյանքի հարուստ փորձ ունեցող մարդ էր: (որոշիչ)

Ախար մինը *կրակի կտոր* գայլ է, մյուսը՝ բոշ-ոչխար, ինչպես են իրարու աչք մտել: (որոշիչ)

Ինքը *ջրի փարած* մեկն է: (որոշիչ)

Ամպի փակի լուսնյակներ, հազիվ երևացիք: (կոչական)

Ածականական դարձվածային միավորները, ինչպես ածականը, կարող են հանդես գալ նաև բայերի հետ՝ կատարելով խնդրի և պարագայի շարահյուսական պաշտոն:

Խելքս քամուն, հովին փված երթամ ընկնեմ դուքան ու բաղ...: (ձևի պարագա)

Սիրահարված ու խենթ անվանի տիկնանց այդ բոլոր պատմությունները *ջրի երկու կաթիլների նման* իրարից չեն տարբերվում: (ձևի պարագա)

Ինչ գործ ունես այդ *երեսը բրդի ջրով լվացածի* հետ (խնդիր)

Ռուսերենում և անգլերենում նույնպես ածականական դարձվածային միավորները նախադասության մեջ կիրառվում են ածական խոսքի մասին հատկանշական պաշտոններում:

Агафон звезд с неба не хватает, но надеюсь, что честный работник на ниве народной из него выйдет. (որոշիչ)

Вспомни-ка, давно ли мы, бывало, Бориска да Васютка, так-то дружили, - водой не разольешь. (ձևի պարագա)

Ксения Васильевна... живет как птица, потому что *не от мира сего*. (որոշիչ)

Старик, получив письмо, заперся в своем кабинете, вышел оттуда на следующий день *туча тучей*. (ձևի պարագա)

Француз, *подбитый ветром*? Он не женат еще? (որոշիչ)

He shut his eyes. It was as if he said: “All right! I’m *dead to the world!*”. (ստորոգ. վերադիր)

“You might give me a hand at least, Anne” she said...”instead of standing with a face *as black as thunder*”. (որոշիչ)

Sir, I am just getting well of a fever, and I am *as weak as water*. (ձևի պարագա)

Presently Montanelli rose and came back with lips *as pale as ashes*. (որոշիչ)

“You all right again, Roy?” the Indian said to him. Roy nodded. “I’m all right, Bob”, he said. “*Right as rain* ”. (ձևի պարագա)

...we’ll snatch that box *quicker’n lightning*. (ձևի պարագա)

The silence as the two men stared at one another was *louder than thunder*. (որոշիչ)

I looked up from Jasper my face red as fire. (որոշիչ)

Ներկայացված նախադասությունները վկայում են, որ դիտարկվող լեզուներում հանդիպող համեմատություն արտահայտող դարձվածքներում ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները հիմնականում համընկնում են:

Եզրակացություն: Բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով ածականական դարձվածային միավորների քերականական՝ ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները դիտարկվող լեզուներում հիմնականում համընկնում են, քերականական կանոնները՝ պահպահվում: Դարձվածային միավորների իմաստային բազմազանությունը, ինչպես նաև դարձվածակազմիչ հնարավորությունները, առանձնակի տարբերություններ չեն դրսևորում քերականական կիրառությունների առումով՝ պայմանավորված տվյալ լեզվի կառուցվածքային տիպով և լեզվակիրների ազգային մտածողության յուրահատկությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարգարյան Ա. Ժամանակակից հայոց լեզու.-Երևան, 1990.- 355 էջ:
2. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան.- Երևան, ԵՊՀ, 1975.-614 էջ:
3. Молотков А.И. Фразеологический словарь русского языка.— М.: Изд-во. “Советская Энциклопедия”, 1967.-543с.
4. Шанский Н.М. Фразеология современного русского языка.-М.: Высшая школа, 1965. -160 с.
5. Seidl J., McMordie W. English idioms and how to use them.- Oxford University Press, 1978. -267p.
6. Кунин А.В. Английская фразеология.- М.: Высшая школа, 1970.-343 с.

Ա.Գ. ПЕТРОСЯН

АДЪЕКТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ, ВКЛЮЧАЮЩИЕ НАИМЕНОВАНИЯ ЯВЛЕНИЙ И ОБЪЕКТОВ ПРИРОДЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Рассматриваются грамматические особенности адъективных фразеологических единиц, включающих наименования явлений и объектов природы в армянском, русском и английском языках. Представлены сходства и различия их употребления в предложении.

Ключевые слова: фразеологическая единица, грамматические правила, морфология, синтаксис, структурный тип, степени сравнения.

H.G. PETROSYAN

**ADJECTIVAL PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS
NAMING NATURE PHENOMENA AND OBJECTS IN ARMENIAN,
RUSSIAN AND ENGLISH**

Grammatical peculiarities of adjectival phraseological units with the components naming nature phenomena and objects in Armenian, Russian and English have been considered. Similarities and differences of their application in the sentence have been introduced.

Keywords: phraseological unit, law/rule, morphology, syntax, structural type, degrees of comparison.

ՀՏԴ 811.111-26

Ջ.Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ներկայացվել են անգլերենի ուսուցման մեթոդաբանական որոշ խնդիրներ, ինչպես նաև՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց: Մեթոդների բազմազանությունը հնարավորություն է տալիս դասավանդողին հեշտորեն մատուցել նյութը:

Առանցքային բառեր. ուսուցման փոխներգործուն մեթոդներ, ուսանողակենտրոն ուսուցում, սովորողներ, դասավանդողներ, ուսումնական գործընթաց:

Ուսուցման մեթոդներն այսօր պայմանականորեն երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից: Ավանդական են համարվում բացատրական-զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Խիստ կարևորվում է, որ ուսումնառության ընթացքում բոլոր դասավանդողներն օգնեն սովորողներին, սակայն այդ օգնությունը չպետք է դառնա միանձնյա ղեկավարում կամ սոսկ վերահսկում [1]:

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Եթե ավանդական մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողը և դասավանդողը, ապա փոխներգործուն մեթոդների դեպ-